ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 փետրվար 2016թվականի N 20- Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N09 - Ա ԵՎ N13 - Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

1.Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի «Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի N112 բնակարան անհատույց Անժելա Ամիչանյանի ընտանիքին օտարելու մասին» N09 - Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝

1) որոշման վերնագրում «N112 բնակարանը » բառերը և թվերը փոխարինել «N105 և N 112 բնակարանները » բառերով և թվերով:

2) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 22.26ք.մ մակերեսով N 105 և 22.28ք.մ մակերեսով N 112 բնակարանները (նախկին Օղակաձև փողոց 4-րդ հանրակացարան 113/113ա սենյակներ) անհատույց օտարել Անժելա Ամիչանյանի երկու անձից բաղկացած ընտանիքին:

1) Ընդհանուր համատեղ սեփականատերեր համարել՝ Անժելա Աղաբեկի Ամիչանյանին ՝ ծնված 1963 թվականի դեկտեմբերի 28–ին Եղիշ Աղաբեկի Սահակյանին՝ ծնված 1962թվականի հունվարի 22-ին:»:

2.Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի «Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի N 44բնակարան անհատույց Բախշիկ Գևորգյանի ընտանիքին օտարելու մասին» N 13 - Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1) որոշման վերնագրում «N44 բնակարանն » բառերը և թվերը փոխարինել « N44 և 52 բնակարանները» բառերով և թվերով:

2) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ. « 1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 16,07ք.մ ընդհանուր մակերեսով N44 և 22.11ք.մ մակերեսով N 52բնակարանները (նախկին Օղակաձև փողոց 4-րդ հանրակացարան 58/58ա սենյակներ) անհատույց օտարել Բախշիկ Սերոբի Գևորգյանի երեք անձից բաղկացած ընտանիքին:

1) Ընդհանուր համատեղ սեփականատերեր համարել՝

Բախշիկ Սերոբի Գևորգյանին ՝ ծնված 1965 թվականի դեկտեմբերի 21-ին

Մարիամ Սենիկի Անտոնյանին՝ ծնված 1965թվականի հունիսի 02-ին

Ռոզա Բախշիի Գևորգյանին ՝ ծնված 1990թվականի սեպտեմբերի 24-ին:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 7 Ձեռնպահ – 0 Դեմ - 0

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ________________

ԲԱԴԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ________________

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ________________

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ________________

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ________________

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԹԱԳՈՒՀԻ________________

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ